Կարգապահական գործ թիվ ԿԳ-18095

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 252-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/198-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր՝ թիվ 749) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ նաև՝ Դպրոց**) կողմից 15.04.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վահագն Մանուկյանը 17.04.2017 թվականից առ 15.03.2018 թվականը չի մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ ԿԳ-16075 կարգապահական գործով 30.01.2017թ. որոշմամբ սահմանված լրացուցիչ վերապատրաստման դասընթացների:

Խորհրդի թիվ ԿԳ-16075 կարգապահական գործով 30.01.2017թ. որոշմամբ (**այսուհետ՝ Խորհրդի որոշում**) փաստաբան Վահագն Մանուկյանը ճանաչվել է մեղավոր Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար:

Խորհրդի որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր 749) նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով: Նշված որոշումը օրինական ուժի մեջ է մտել 15.04.2018թ.:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 20.03.2018թ. թիվ 165-Ա/ԿԳ-18095 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 39.9 հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

23.03.2018թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի սեպտեմբերի 06-ին, ժամը՝ 18:28-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Վահագն Մանուկյանը 07.07.2018թ. թվականի Խորհրդի նիստին ներկայացել և հայտել է, որ Խորհրդի որոշումը չի ստացել քանի, որ վատառողջ է եղել և գրասենյակը փակ է եղել:

Պատասխանողը խնդրել է հնարավորություն ընձեռել մասնակցել վերապատրաստման դասընթացներին:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ ԿԳ-16075 կարգապահական գործով 30.01.2017թ. թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանը ճանաչվել է մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար և նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ տուգանք 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով:

Նշված փաստը հաստատվում է Խորհրդի թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ:

2) 2017թ. երկրորդ կիսամյակի (հուլիս-դեկտեմբեր (ներառյալ)) ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվել են ընդհանուր 111 (հարյուր տասնմեկ) դասընթաց, որոնցից Դպրոցի և Պալատի կողմից կազմակերպվել է 11 (տասնմեկ) վերապատրաստման դասընթաց՝ Դեոնթոլոգիա թեմայով (8-ը՝ Պալատի, իսկ 3-ը՝ Դպրոցի կողմից):

2018թ. հունվար-փետրվար ամիսներին ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվել են ընդհանուր 17 (տասնյոթ) դասընթաց, որոնցից Դպրոցի և Պալատի կողմից կազմակերպվել է 2 (երկու) վերապատրաստման դասընթաց՝ Դեոնթոլոգիա թեմայով (1-ը՝ Պալատի, իսկ 1-ը՝ Դպրոցի կողմից):

Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի 06.07.2018թ. տեղեկանքով, ինչպես նաև Պալատի աշխատակազմի ղեկավարի 06.07.2018 թվականի տեղեկանքով:

3) Փաստաբան Վահագն Մանուկյանը 15.04.2017 թվականից առ 15.03.2018 թվականը չի մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ ԿԳ-16075

կարգապահական գործով 30.01.2017թ. որոշմամբ սահմանված լրացուցիչ վերապատրաստման դասընթացների:

Նշված փաստը հաստատվում է Դպրոցի 16.03.2018թ. տեղեկանքով:

4) Փաստաբան Վահագն Մանուկյանը 31.08.2018 թվականին մասնակցել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված «Դեոնթոլոգիա» թեմայով դասընթացին՝ չորս ակադեմիական ժամ ժամաքանակով

Նշված փաստը հաստատվում է Պալատի վերապատրաստման հարցերով համակարգողի կողմից 06.09.2018թ. տրամադրված տեղեկանքով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 06.09.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վահագն Մանուկյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից:

2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում Վահագն Մանուկյանի նկատմամբ 12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից երեքը կարճվել են:

12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (11 ավարտված վարույթ և 1 ընթացիկ): Այսպես՝

- Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 09.09.2015թ. թիվ ԿԳ/86-Ա որոշմամբ կարճվել է.
- Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 01.02.2016թ. թիվ ԿԳ/15-Ա որոշմամբ կարճվել է.
- Կանոնագրքի 6.1.1 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 03.06.2016թ. թիվ ԿԳ/73-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարվել է:
- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 21.11.2016թ. թիվ ԿԳ/175-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, տույժը մարվել է:
- Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 26.01.2017թ. թիվ ԿԳ/22-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով, տույժը մարվել է:
- Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 30.01.2017թ. թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 50000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով: Տույժը մարված չէ:
- Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 21.12.2017թ. թիվ ԿԳ/129-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով, տույժը մարված չէ:

▪ Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը Խորհրդի 21.12.2016թ. թիվ ԿԳ/139-Ա որոշմամբ կարճվել է.

▪ Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 03.04.2018թ. թիվ ԿԳ/57-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ տուգանք՝ 200000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ վերապատրաստման դասերի մասնակցություն 8 ժամ ժամաքանակով:

▪ Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.1.10, 3.5.5 և 3.8.5(1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 16.06.2018թ. թիվ ԿԳ/100-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ կիրառվել է տույժ՝ արտոնագրի դադարեցում, որոշումն ուժի մեջ մտած չէ:

▪ Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը Խորհրդի 07.07.2018թ. թիվ ԿԳ/123-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով, որոշումն ուժի մեջ մտած չէ:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության, Կանոնագրքի և Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման կարգի (**այսուհետ՝ Վերապատրաստման կարգ**) դրույթներով:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ... սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Օ*րենքի 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝* *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ*:

Կանոնագրքի 2.8.2 ենթակետը սահմանում է, որ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Օրենքը վերապատրաստման դասընթացի պարտադիր մասնակցության երկու տեսակ է սահմանել՝ հիմնական և լրացուցիչ: Վերապատրաստման դասընթացների մասնակցության ժամաքանակը և կարգը սահմանում է Պալատի խորհուրդը:

Վեարապատրաստման կարգի 17-րդ և 18-րդ կետերի համաձայն՝

17. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից լրացուցիչ վերապատրաստման ժամանակաշրջան սահմանված չլինելու դեպքում, փաստաբանը լրացուցիչ վերապատրաստման դասընթաց պարտավոր է անցնել խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 6 (վեց) ամսվա ընթացքում:

18. Փաստաբանն իր հաշվին վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դեպքում պարտավոր է առնվազն երեք օր առաջ առձեռն կամ փոստային ծառայության միջոցով գրավոր տեղեկացնել ՀՀ փաստաբանների պալատին, նշելով՝

ա) խորհրդի որոշման ամսաթիվը և համարը, որի հիման վրա սահմանվել է լրացուցիչ վերապատրաստում,

բ) արտոնագրի համարը,

գ) ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված կամ ՀՀ փաստաբանների պալատի կողմից ընդունելի վերապատրաստում իրականացնող այլ կազմակերպության անվանումը,

(ենթակետը փոփոխվել է ՀՀ ՓՊ խորհրդի 21.12.2016թ. թիվ 26/5-Լ որոշմամբ)

դ) դասընթացավարի անունը, ազգանունը,

ե) դասընթացի թեման և

զ) դասընթացի անցկացման օրը, ժամը և վայրը:

Դիմումը պետք է ստորագրված լինի փաստաբանի կողմից, դիմումին պետք է կցված լինի վերապատրաստում իրականացնող կազմակերպությանը վճարում կատարելու փաստը հաստատող անդորրագրի պատճենը (կամ այդ կազմակերպության գրավոր հավաստումը, որ տեղեկացված է փաստաբանի կողմից իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու անհրաժեշտության մասին): Սույն կետում նշված կարգի խախտմամբ իրականացված վերապատրաստումը ՀՀ փաստաբանների պալատը չի հաշվարկելու: Սույն կետում նշված կանոնները կիրառվում են նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով կարգապահական տույժի ենթարկված փաստաբանների նկատմամբ:

Վերը նշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է անցնել Խորհրդի կողմից սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ: Սահմանված ժամկետում վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության: Միաժամանակ սահմանված է, որ փաստաբանը պարտավոր է մասնակցել Խորհրդի կողմից սահմանած լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին՝ խորհրդի կողմից սահմանած ժամանակահատվածում, ինչպես նաև կատարել Խորհրդի՝ իրենց իրավասության սահմաններում ընդունված իրավական ակտերի պահանջները:

Փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս, Խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում չի մասնակցել, իր նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառված՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին: Գործում առկա ապացույցների վերլուծությունից երևում է, որ խորհրդի 30.01.2017 թվականի թիվ ԿԳ/123-Ա որոշումը Վահագն մանուկյանի մասով ուժի մեջ է մտել **2017 թվականի ապրիլի 15-ից:** Հետևաբար, Վահագն Մանուկյանը պարտավոր էր խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից՝ 15.04.2017թ. մինչև 15.03.2018թ-ը (վեց ամսյա ժամկետում) մասնակցել վերապատրաստման դասընթացների՝ իր հաշվին:

Ինչպես արդեն նշվել է, 2017թ. երկրորդ կիսամյակի (հուլիս-դեկտեմբեր (ներառյալ)) ընթացքում ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվել են ընդհանուր **111 (հարյուր տասնմեկ) դասընթաց**, որոնցից Դպրոցի և Պալատի կողմից կազմակերպվել է 11 (տասնմեկ) վերապատրաստման դասընթաց՝ Դեոնթոլոգիա թեմայով (8-ը՝ Պալատի, իսկ 3-ը՝ Դպրոցի կողմից): Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա դասացուցակները հաստատվել և տեղադրված են եղել Պալատի կայքում:

Փաստաբան Վահագն Մանուկյանն այս ժամանակահատվածում (ինչպես նաև՝ 2018 թվականի հունվար-փետրվար ամիսներին) չի դիմել Պալատին դեոնթոլոգիայի դասընթացի մասնակցության համար կամ չի ներկայացրել Պալատի կողմից հավատարմագրված որևէ այլ կազմակերպության կողմից կազմակերպված դասընթացին մասնակցելու վերաբերյալ ապացույց:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանն օբյեկտիվորեն ունեցել է հնարավորություն հաշվետու ժամանակահատվածում անցնելու 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները, սակայն չի կատարել օրենքով նախատեսված պարտականությունը և խախտել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի պահանջները:

Խորհուրդ հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ փաստաբան Վահագն Մանուկյանը «Դեոնթոլոգիա» թեմայով 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները անցել է 31.08.2018 թվականին՝ խախտելով Խորհրդի կողմից սահմանված վեցամսյա ժամկետը:

Նման պայմաններում Պալատի խորհուրդը գտնում է, որ Վահագն Մանուկյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

<u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք (…):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի Խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները (այդ թվում՝ առկա տույժերը), փաստաբանի անձը, այն հանգամանքը, որ փաստաբան Վահագն Մանուկյանը չի կատարել Խորհրդի որոշումը, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոգրյալից, Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 4-րդ մասի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև Վերապատրաստման կարգի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր՝ թիվ 749) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

2. Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 749) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահագն Մանուկյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

06 սեպտեմբերի 2018թ.
թիվ ԿԳ/198-Ա
ք. Երևան